# Արձանագրություն N 2

## ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

22 հուլիսի 2020թ.

գ. Քանաքեռավան Ժամը՝ 15:00

*Հանձնաժողովի նախագահ՝*

- Ա.Առաքելյան - ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

*Հանձնաժողովի անդամներ՝*

- Ս. Հարությունյան - ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
- Ն. Սարիբեկյան - ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

*Հանձնաժողովի քարտուղար՝* Տ. Հովհաննիսյան

<u>Օրակարգ</u>

<u>Բանակցությունների անցկացում</u>

1.1 ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր էին ներկայացրել «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն և «Ֆլեշ» ՍՊԸ-ն: Մասնակիցների առաջարկած գները գերազանցում են նախահաշվային արժեքը, ուստի մասնակիցները համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի հրավիրվել են գների նվազեցման նպատակով կազմակերպվող միաժամանակյա բանակցությունների սույն թվականի հուլիսի 22-ին ժամը 15:00-ին:

1.2 Բանակցությունների արդյունքում «Մաքս Օիլ» ՍՊԸ-ն և «Ֆլեշ» ՍՊԸ-ն չեն սակարկել իրենց կողմից ներկայացրած գնային առաջարկները:

1.3 ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, այն է՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ________________ Ա. Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Ս. Հարությունյան

________________ Ն. Սարիբեկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Տ. Հովհաննիսյան